և ք՝ս|ասէր ս՝ն Աշոտոյ իբրեւ | զբարբիոնն ներքն|ծայեաց զչորից աւեստարան-չացն զարտա|ճառութիւնսն ի՛մի | հաւաքելով առ ի յիշա|տակ սատգաւղին եւ ըն|ծայացելումն ՅՈՐ | թուականութեանն * | հայոց. հրամանաւ տ՝ն | Աշոտոյ. ք՝ի Ա՝յն մերոյ փառք յաւիտեան . . » Ընդգծուածը տես պատկերի մէջ Տախտակ ԺԶ։

Բնագիրը $13^1/_2 \times 7$ սմ., մեր նկարը $8^1/_2 \times 4^1/_2$ սմ.։

36. Մատ. Ս. Էջմ. Գ. 102|2679. Ժողովածու պատմական—ժամանակագրական կարևոր նիւթերի։ թուղթ (Հայոց ձեռագիրների մէջ ամենահինը). 28,2×$19^1/_2$ սմ., միջեան 24×14 սմ.։ ԳԻՐ. երկաթագրախառն բոլորգիր։ ԳՐԻՉ. Ղուկաս, որդի Դաւթի քահանայի 152ա, 86բ «Ցիշեսջիք ի ք՝ս զիս, զԴաւիթ քահանայ, որոյ գիրս գրեցաւ եւ զորդի իմ զՂուկաս, որ գծագրեաց իսկ զսա»։ ՍՏԱՑՈՂ. Դաւիթ քահանայ՝ գրչի հայրը. «զԴաւիթ քահանայ յիշեսջիք ի ք՝ս, զստացող ս՝ը գրոցս» 59բ.։ ՏԵՂ. Անյայտ։ ԺԱՄԱՆԱԿ 971 թ. փրկչական։ «Տ՝ը յ՝ս ք՝ս միածին որդի ա՝յ, ողորմեա Գիշին եւ Ազիզ մամին եւ զաւակաց նոցա, տ՝ը Սարգսի, Կարապետին եւ Մելքիսեդեկա եւ մեղաւոր աւագ երէց Յովհաննիսի որդւոյ Գիշի, որ զգրկունքս գնեցի, եւ յետ ՄԾԴ ամի զցանկս յաւրինեցի ի ՈՀԴ թուականիս», 163ա։ Նորոգութեան յիշատակարան ունինք 981 թուից. «Եւ է է նորոգումն սորա ի ՆԼ թուականութեանս Հայոց», 152ա։

Դանօր. Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան ոչ միայն իբրև Ժ. դարու միակ թղթի ձեռագիրը Հայոց մէջ, այլ և իւր գրի ու հարուստ բովանդակութեան համար։

Նկարուած է 233բ., բնագիրն է $9^1/_2 \times 13,8$ սմ., մեր նկարը 9,1×13,2, չնչին սարբերութեամբ փոքր։

37. Մատ. Ս. Էջմ. Գ. № 159/2684։ Մեկնութիւն Երգոց երգոյն Գրիգորի Նիւսացւոյ, հաստ և կոշտ մագաղաթ, $28^1/_2 \times 21,2$ սմ., թերթ 246։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, երկիջեան $21^1/_2 \times 6^1/_2$ սմ.։ ԳՐԻՉ. «Ձեռամբ Պետրոսի անարժան գրչի»։ ՍՏԱՑՈՂՔ Հայր Կիւրակոս և միաբանութիւն. «հրամանաւ հաւր Կիւրակոսի եւ համակամութեամբ եղբարցս»։ ՏԵՂ. «ի գաւառին Տարաւնոյ»։ ԺԱՄԱՆԱԿ. 973 թ. փրկչական. «ՆԻԲ» Հայոց։

Դանօր. Այս Ձեռագիրը արժանի է առանձին ուշադրութեան, իբրև մէկը Ժ. դարու գրչութեան հազուագիւտ մնացորդներից, որ Աւետարան չէ։

Նկարուած է ա) 245ա. յիշատակարանը, որ միջին երկաթագրի տարբեր տեսակն է, շատ գեղեցիկ և կանոնաւոր։ Բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

բ) 245բ. Շեղագիր, ՈԸ=1159 թուի. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

38. 39. 45. Ախալցխայի գաւառի Ծրոյ գիւղի Աւետարան. Մագաղաթ. 31×25 սմ.։ ԳԻՐ խոշոր երկաթագիր. յիշատակարանը խաչաձևի մէջ, միջին երկաթագիր։ ԳՐԻՉ. «Յովհաննէս ծառայս ք՝ի» Աւետարանի համար,